Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ ԹԻՎ 14-Ա, 15-Ն ԵՎ 16-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 14-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին կատարված հղումը սխալ է, քանի որ այն սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների բնագավառում:

Որոշմամբ հաստատված հավելվածում «1-ին եռամսյակում եկամուտները կատարվել են» տողի դիմաց նշված «99%» թիվը փոխարինել «100.4» թվով:

Թիվ 15-Ն որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին հղում կատարելու անհրաժեշտություն չկար, քանի որ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ չեն ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս և քանի որ իրավական ակտում բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ չեն շարադրվել: Բացի այդ, որոշմամբ լրացումներ չեն կատարվել, հետևաբար՝ բովանդակության մեջ «և լրացումներ» բառերն անհրաժեշտ է հանել:

Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:

Որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկար, քանի որ 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով կատարված փոփոխությունները չեն հանգեցրել համայնքի բյուջեի ընդամենը ծախսերի ավելացման կամ նվազեցման: Անհրաժեշտ է որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

Թիվ 16-Ա որոշման վերնագրում «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ» բառից հետո լրացնել «ՀԱՄԱՅՆՔԻ» բառը:

Որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին: Բացի այդ, որոշման 1-ին կետում նշված «խախաղության» բառը փոխարինել «խաղաղության» բառով:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
07.05.2020թ.